

## ԱՐՁՈՒՄԱՆ ԱՅՎԱԶՅԱՆ

\* \* \*

Երեխաները ծաղիկներով են վերադառնում դաշտից,  
Երեխաները մաս ունեն երկնքից:

Ահա ծառը կանաչ, տերևներն են կանաչ,  
Կանաչի մեջ բույնը, զրնգոցը արծաթ –  
Ահա գիշերը խարան:  
Քնած է աղջիկը, ես արթնացնում եմ նրան,  
Ես կոճակ առ կոճակ արթնացնում եմ նրան:

Ահա հոսում է ջուրը, օրն է կոճակ,  
Ահա հոսում է ջուրը, կոճակն է բույն,  
Ահա հոսում է ջուրը, բույնն է աչք:  
Ջուրը տանում է աչք, բույն ու կոճակ:

Ես արթնացնում եմ քնած աղջկան,  
Նրա աչքերին երկու աղավնի  
Թևերը քսում են իրար:  
Երեխաները ծաղիկներով են վերադառնում դաշտից,  
Երեխաները մաս ունեն երկնքից:

\* \* \*

Գուլյնն է կարկամում,  
Թե ծաղկանվագ մնաց դաշտերում:  
Ծաղկամորրիկը ճամփաս չի փակի,  
Ծաղկամորրիկը ինձ ափ կհանի:

Ահա ալիքը ու տունս վրան,  
Ահա կինն ինքը կես ամբողջություն,  
Ջեռու դաշտերում նվագներ եղան,  
Նվագներ հղի, մորմոքներ թաքուն:

Կատարելության անկատարն է գեղեցկությունը,  
Դրա համար է առավոտը շաղ դնում խոտերին,  
Դրա համար է թռչունը կախվում իր իսկ դայլայլից,  
Եվ մեղա, մեղա, ծաղկաթերթն ընկնում հեզ, բնականոն:

Գուլյնն է կարկամում,  
Տունս կարգին է, ալիքը՝ ալիք,  
Եվ շատ ու քիչ խմորումներից  
Բաժին է ընկնում ծաղկաթերթը ինձ: